**«Բնապահպանական պետական սուբվենցիաների արդյունավետության գնահատում»**

**Ազդակիր համայնքների բնակչության շրջանում հարցումների կազմակերպում և իրականացում (դաշտային աշխատանքների հաշվետվություն )**

**Հետազոտության համառոտ նկարագրություն**

Հետազոտության նպատակն է նպաստել 2004-2017 թվականների ընթացքում պետական սուբվենցիաներով իրականացված բնապահպանական միջոցառումների արդյունավետության վերաբերյալ ընթացիկ գնահատմանը:

Հետազոտությունը նպաստում է «Խազեր» ՀԿ-ին ստանալու գնահատման համապարփակ և հասցեական պատկեր՝ պետական բյուջեից հատկացված ծախսերի նպատակային օգտագործման, իրականացվող բնապահպանական ծրագրերի՝ տեղական բնակչության կարիքների և պահանջների վերաբերյալ և այլն:

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի վեց մարզերի ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրվող պետական սուբվենցիա ստացած երեսուն համայնքներում դեմ առ դեմ հարցման միջոցով թվով 600 չափահաս բնակչության շրջանում, որոնք ընտրվել են պատահական ընտրանքով:

**Հարցաթերթի մշակում**

Կիսաձևայնացված հարցաթերթի նախնական տարբերակը մշակվել է «Խազեր» ՀԿ-ի կողմից: Մի քանի հանդիպումների միջոցով մշակվել և բարելավվել է հետազոտության գործիքը «Խազեր» ՀԿ և ՀՌԿԿ ներկայացուցիչների կողմից, ներառյալ դրա կառուցվածը և հարցերի ձևակերպումները: Այն բաղկացած էր հետևյալ ութ բաժիններից՝

- Իրազեկվածություն եվ մասնակցություն
- Ջրամատակարարում, ոռոգում
- Կենցաղ, լուսավորություն, ճանապարհներ, աղբահանություն
- Կանաչապատում, բնապահպանություն
- Անտառ, հատուկ պահպանվող տարածք
- Կլիմայի փոփոխություն
- Տիմ գործունեություն

- Սոցիալական եվ ժողովրդագրական տվյալներ:

**Ընտրանքի նկարագրություն**

Հետազոտությունը ներառել է 2004-2017 թթ. ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված սուբվենցիաները ստացած 30 համայնքներից պատահականորեն ընտրված 600 չափահաս բնակիչ: Յուրաքանչյուր համայնքում տնային տնտեսությունների ընտրությունը իրականացվել է պատահական քայլի մեթոդով /այցելվել է ամեն 4-րդ տնային տնտեսությունը/ 2017թ. ընտրատեղամասերի ցուցակից պատահականորեն ընտրված տեղամասից: Տնային տնտեսությունում հարցվողների ընտրությունն իրականացվել է առաջիկա ծննդյան օրվա մեթոդով:
Ընտրանքի բաշխումը ըստ թիրախ համայնքների ներակայացված է ստորև աղյուսակում:

| | Համայնքի անվանումը | Կլաստերների քանակը |
|---|---|---|
| | ԼՈՌԻ | |
| 1 | Ալավերդի | 6 |
| 2 | Օձուն | 1 |
| 3 | Աքորի | 1 |
| 4 | Հաղպատ | 1 |
| 5 | Հագվի | 1 |
| 6 | Ախթալա | 1 |
| 7 | Շնող | 1 |
| 8 | Մեծ Այրում | 1 |
| | ՍՅՈՒՆԻՔ | |
| 9 | Քաջարան | 2 |
| 10 | Կապան | 6 |
| 11 | Սյունիք | 1 |
| 12 | Լեռնաձոր | 1 |
| 13 | Կարճևան | 1 |
| 14 | Ագարակ | 1 |
| | ԿՈՏԱՅՔ | |
| 15 | Հրազդան | 6 |
| 16 | Չարենցավան | 4 |
| 17 | Մեղրաձոր | 1 |
| 18 | Ծաղկաձոր | 1 |
| | ԱՐՄԱՎԻՐ | |
| 19 | Արտաշատ | 6 |

| | | |
|---|---|---|
| 20 | Արարատ | 6 |
| 21 | Մեծամոր | 3 |
| ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ | | |
| 22 | Սոթք | 1 |
| ՏԱՎՈՒՇ | | |
| 23 | Այրում | 1 |
| 24 | Արճիս | 1 |
| 25 | Դեղձավան | 0.5 |
| 26 | Դեբեդավան | 0.5 |
| 27 | Բագրատաշեն | 1 |
| 28 | Հաղթանակ | 1 |
| 29 | Պտղավան | 1 |
| 30 | Զորական | 1 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **60** |

Ապահովելու նվազագույն ներկայացվածություն, յուրաքանչյուր համայնքում պատահականորեն ընտրվել են թվով 10 հարցվողներ: Բաշխումը իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից տրամադրված սուբվենցիաները 2004-2018 թթ. և տվյալ համայնքներում բնակչության թիվը: Դեղձավան և Դեբեդավան համայնքներում բնակչության թիվը, տրամադրված սուբվենցիաների գումարի փոքր ծավալը, ինչպես նաև համայնքների՝ իրարից ունեցած հեռավորությունը հաշվի առնելով, ընտրվել են յուրաքանչյուրում հինգական հարցվողներ:

**Դաշտային աշխատանքներ**

Դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով տվյալների հավաքագրումը տեղի է ունեցել CAPI համակարգով գործող դյուրակիր սարքի օգնությամբ: Տվյալները հավաքագրվել են 2018 թ. օգոստոսի 12-25: Հարցման տևողությունը միջինում կազմել է 20 րոպե:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են ՀՌԿԿ-ի հմուտ 14 զրուցավարների կողմից: Ընդհանուր համակարգումը և որակի ստուգումն իրականացվել է Դաշտային աշխատանքների համակարգողի և Տվյալներ հավաքագրման ծրագրերի ղեկավարի կողմից:

Հարցաթերթին, պատահական ընտրանքի կանոններին և կից փաստաթղթերին ծանոթանալու և հմտանալու համար իրականացվել է զրուցավարների և համակարգողի վերապատրաստում: Վերապատրաստման ընթացքում զրուցավարները հմտացել են հարցաթերթի հետ և քննարկել դաշտային

աշխատանքների ընթացքում հնարավոր խնդիրները: Դասընթացը իրականացվել է օգոստոսի 11-ին, որից հետո անմիջապես սկսել են դաշտային աշխատանքները: